

Հայկական ժողովուրդ, որ ունի զարգացման ընդունակ իւր սեպհական հարուստ լիզուն (թէև առանց գորան էլ յայտնի է ամենին) և Ազգային Քրիստոնէական Առաքելական Եկեղեցին, ժողովուրդ, որ իւր բազմատեսակ մարդավայել առանձնայատկութիւններով արժանի և ընդունակ է ապրելու իբրև Ազգ ազգային իրաւունքներով:

Խմբագրութիւնս այս ընկերութեանը ցանկանումէ կատարեալ յաջողութիւն և քաջայոյս է, որ սա իւր գործունէութեան մասին մերթ ընդ մերթ ուրախալի տեղեկութիւններ հաղորդելով խմբագրութեանս՝ կուրախացնէ և Արարատի յարգոյ ընթերցողներին:

Առայժմ կարևոր կհամարեմք յիշեալ ընկերութեան գրութիւնից հետագայ մի քանի պարբերութիւնքը քաղել և մեր սիրելի Ազգայնոց քաղցր և լուրջ ուշադրութեանը յանձնել:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՈՒՍՈՒՄ ՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱԵՐԸ.

« Հայն զգալով վերջապէս այն սկզբուն ճշդութիւնն ու ճշմարտութիւնը թէ « ո՛վ որ օտարին վրայ կը խարսխէ իւր յոյսը, . . . արգահատանք միայն թող սպասէ անկէ . . . , իւր գոյութիւնն ի հիմանց արմատախել սպառնացող անտարբերութիւնը թօթափեց, փարատեց իւր մտաց աչերը սքողող ամպերը, ջախջախեց իւր կորովի բազուկները կաշկանդող կապերը, և աշխարհ աշխատողին բաժինն ըլլալուն համոզուելով իւր սեպհական ոյժովն ու հանճարովը իւր վերածնութեան հիմունքը դաստիարակութեան և զիտութեան անխախտելի և անհիւժական տարրերով հիւսել ձեռնարկեց:

Իցի՛ւ թէ դարևոր եղած լինէր այս արթնութիւնը:

Տայ՛ Երկինք՝ որ մշտապէս լինի այս սթափումը:

« Իւր անձին և իւր ազգին բարեացակամ ամեն Հայ, պարտազանցութեան ծանր դատակնիքը իւր ճակտին վրայ չզրոշմելու և խիղճն յաւիտենական խայթի չմատնելու համար, թող պատրաստ են այս սրբազան և նուիրական պարտքն իւր բաժինը վճարելու:

« Իւր Ազգին և Հայրենեաց բարօրութեանը չաշխատող Հայը՝ Հայ անունը կրելու չէ արժանի: »

« Ներելի՞ էր մեզ, . . . անտարբեր մնալ այս քրտնասարսուռ դատակնիքի առաջ, մեզ՝ որ օտարութեան և պանդխտութեան մէջ մեզ սպասող վտանգներն ու խօշնդոտները արհամարհելով՝ Ազգին մի օգտակար անդամը լինելու մտօք սլացած եմք յՆւրոպայ, անդ ուսումն և զիտութիւն քաղելու համար, և ո՛չ ապաքէն մեզ առ առաւելն անկ էր և վստել յարգիւնս ածել մեր զգացումն՝ րը, Եւ ահա այս զգացմամբ և ոգւով հաստատեցինք Հայ-
կա-ն-՝ Ուսումն-ը Եւ ինքն-ը, որ նպատակ ունի ազգային աղքատ պատանեկաց բարձրագոյն ուսմունքներ սովորեցնել տալ Եւրոպիոյ համալ-

սարանաց մէջ, և այսու եղանակաւ ընծայել Ազգին ընտիր և յաջողակ մասնագէտներ, որք կարող լինին ճոխացնել ազգային մատենադրութիւնը ուսումնական գրութեամբք և տարածել ի Հայրենիս. նպատակ ըստ ամենայնի օգտակար և պիտանի և սակայն կարի դժուարին, և որոյ ձեռնարկել Հպիտի յանդգնէինք անշուշտ, եթէ ամեն ուսումնասէր և Հայրենասէր Ազգայնոց ջերմ համակրութեանն ու յօժարակամ ձեռնառութեանը վրայ վստահ չլինէինք:

Հայկազեան—Ուսումնասիրացս ընկերութիւնը զգալով նաև Փարիզու նման մի լուսաւորեալ քաղաքի մէջ ազգային և ուսումնական կեդրոն մը ունենալու պէտքը, հաստատեց մի ընթերցարան և թանգարան, որոյ բացման հանդէսը պիտի կատարի յամի Տեառն 1881, յառաջին աւուր յունվար ամսոյ (ն. տ.):

Աւելորդ կրթութի մէջ, ... սորա նման մի նշանաւոր ձեռնարկի կարեւորութիւնն ու օգուտները ընդարձակ բացատրութեամբք մատնանիշ առնել, և թողլով մօտաւոր ապագայի մը ճանչցընել նորա մատուցանելիք ծառայութիւնները, կը բաւականանամք ընդհանուր Ազգին և ի մասնաւորի Ձեր ... բարձր ուշադրութիւնը հրաւիրել, վստահ լինելով որ մեր ջանքն ու աշխատութիւնը համակրող և քաջալերող մեծածիւ խմբի մը առաջին օրինակը պիտի հանդիսանայք խրախուսելով զմեզ այն ամեն միջոցներով, որոց պէտքը կզգայ Հայկազեան—Ուսումնասիրաց ընկերութեան և իւր ընթերցարանի ու թանգարանի անմիջական օգուտն ու զարգացումը:

Մեծ

Ի Դիմաց Հայկազեան—Ուսումնասիրաց Ընկերութեան.

Ատեմայեա ՅԻՄԷՕՆ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ,

Ատեմադպիր ՆԻԿՈՂՈՍ ԵՆՐՊԷԹԵԱՆ,

Իմօք.—Հայկազեան—Ուսումնասիրաց ընկերութիւնը պատիւ ունի միանգամայն յայտարարել ներկայիւս, որ պատրաստ է մատուցանել Արդոյ հասարակութեան ամեն կարելի եղած ծառայութիւն և տալ իրմէ պահանջուած ամեն տեղեկութիւն, ինչպէս նաև մեծաւ հոգածութեամբ առաջնորդ հանդիսանալ ազգային ուսանողաց և ճանապարհորդաց, որք ի հարկէ զանազան դժուարութեանց կրնան հանդպիլ օտար երկրի մը մէջ. ընկերութեանս վերաբերեալ նամակ կամ այլք հետեւեալ հասցէով ուղղուելու են:

ՊԱՐՈՆ ՍԻՄԷՕՆ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ, ԱՏԵՆԱՊԵՏ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՌԻՍՈՒՄԵՆԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Ի ՓԱՐԻՋ

Cimeon Raphaëlian, Président de la
SOCIÉTÉ PHILOMATHIQUE ARMÉNIENNE DE PARIS. 47 Rue des Beuillantines.

44 Սեպտեմբերի 1879 ամի: